

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2003 թվականի
նոյեմբերի 26-ին

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հանրային ծառայությունը

(1-ին հոդվածը փոփ. 09.02.2005 ՀՕ-175, փոփ. 29.12.2008 ՀՕ-90-Ն, լրաց. 17.02.2010 ՀՕ-10-Ն, ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-112-Ն)

Հոդված 2. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով սահմանվում են Արցախի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքները և կարգավորվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման և քաղաքացիական ծառայության դասային աստիճանների, քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակման, քաղաքացիական ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվի, քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի, քաղաքացիական ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

(2-րդ հոդվածը փոփ. 30.05.2007 ՀՕ-42)

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

ա) **քաղաքացիական ծառայություն**՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն, որը կատարվում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված մարմիններում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով:

բ) **քաղաքացիական ծառայության պաշտոն**՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն:

գ) **քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկ**՝ սույն օրենքով սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնների ցանկ:

դ) **քաղաքացիական ծառայող**՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի, սույն օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով զբաղեցրած պաշտոնի) զբաղեցնող կամ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող անձ:

ե) **համապատասխան մարմին**՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված մարմին:

զ) **քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր**՝ տվյալ պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող, ինչպես նաև քաղաքացիական ծառայության դասային համապատասխան աստիճան ունենալու պահանջները սահմանող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ:

է) **քաղաքացիական ծառայության դասային աստիճան**՝ քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորման չափանիշ:

ը) **աշխատակազմի ղեկավար**՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետում նշված պաշտոնատար անձ:

թ) **քաղաքացիական ծառայողների ատեստավորում**՝ զբաղեցրած պաշտոնին քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշում:

ժ) **քաղաքացիական ծառայողների վերապատրաստում**՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործում.

ժա) **քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվ**՝ սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոններ չգրադեցնող քաղաքացիական ծառայողների և սույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց հանրույթ.

ժբ) **ծառայողական քննություն**՝ սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով քաղաքացիական ծառայողի պարտականությունների կատարմանն ու նրա գործունեությանն առնչվող հարցերի քննություն.

ժգ) (կեսն ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-112-Ն)

ժդ) (կեսն ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-112-Ն)

ժե) (կեսն ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-112-Ն)

ժզ) **մասնագիտական աշխատանքային ստաժ**՝ ստացած բարձրագույն կրթության, իսկ տվյալ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժ, անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից: Մասնագիտական աշխատանքային ստաժը ներառում է համապատասխան որակավորում ստանալուց հետո աշխատած ժամանակաշրջանը:

2. (մասն ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-112-Ն)

3. (մասն ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-112-Ն)

4. (մասն ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-112-Ն)

(3-րդ հոդվածը լրաց 09.02.2005 ՀՕ-175, խմբ. փոփ 21.12.2005 ՀՕ-255, լրաց 30.05.2007 ՀՕ-42, լրաց 29.12.2008 ՀՕ-90-Ն, լրաց 17.02.2010 ՀՕ-10-Ն, լրաց 19.12.2012 ՀՕ-26-Ն, փոփ 26.12.2013 ՀՕ-112-Ն, լրաց 26.02.2014 ՀՕ-5-Ն)

Հոդված 4. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է հետևյալ մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա՝

ա) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմում.

բ) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանումում.

գ) Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմում.

դ) Արցախի Հանրապետության հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմերում.

ե) Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում.

զ) Արցախի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների աշխատակազմերում.

է) Արցախի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների աշխատակազմերում.

ը) Արցախի Հանրապետության շրջվարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմերում:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված մարմիններում քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք քաղաքացիական ծառայողներ չեն համարվում:

(4-րդ հոդվածը փոփ 09.02.2005 ՀՕ-175, փոփ 21.12.2005 ՀՕ-255, լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 5. Քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքները

Քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքներն են՝

ա) Արցախի Հանրապետության Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը.

բ) քաղաքացիական ծառայության կայունությունը.

գ) քաղաքացիական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը և օրենքի առջև քաղաքացիական ծառայողների իրավահավասարությունը.

դ) քաղաքացիական ծառայության հրապարակայնությունը.

ե) քաղաքացիական ծառայողների քաղաքական զսպվածությունը.

զ) քաղաքացիների համար քաղաքացիական ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան.

- ե) քաղաքացիական ծառայողների պրոֆեսիոնալիզմը.
- ը) քաղաքացիական ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը.
- թ) քաղաքացիական ծառայողների պատասխանատվությունն իրենց ծառայողական պարտականությունները կատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.
- ժ) քաղաքացիական ծառայողների գործունեության վերահսկելիությունը և հաշվետու լինելը:
(5-րդ հոդվածը լրաց 17.02.2010 ՀՕ-10-Ն)

Հոդված 6. Քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությունը

- 1. Քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, քաղաքացիական ծառայության խորհրդի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:
- 2. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:
- 3. Քաղաքացիական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոններով:
(6-րդ հոդվածը փոփ 17.02.2010 ՀՕ-10-Ն)

Գ Լ ՈՒ Խ 2

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ
ՂԱՍՏԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԱՍՏՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ**

Հոդված 7. Քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգումը

- 1. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից:
- 2. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի՝
 - ա) քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ.
 - բ) քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոններ.
 - գ) քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ.
 - դ) քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոններ:
- 3. Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին և 2-րդ ենթախմբերի, իսկ քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերը դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:
- 4. Քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը հաստատում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

Հոդված 8. Քաղաքացիական ծառայության դասային աստիճանները

- 1. Քաղաքացիական ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները՝
 - ա) քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին կամ 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճաններ.
 - բ) քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների՝
 - 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան,
 - 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան,
 - 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի

Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.

զ) քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների՝

- 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան,

- 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,

- 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.

դ) քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոնների՝

- 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,

- 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան,

- 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

2. Բարձրագույն՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին և 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանները շնորհում, դասային աստիճանն իջեցնում, ինչպես նաև դասային աստիճանից զրկում է Արցախի Հանրապետության Նախագահը:

3. *(մասն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42)*

4. *(մասն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42)*

5. Քաղաքացիական ծառայության պաշտոնի, բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնի, նշանակման հետ միաժամանակ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողին շնորհում է քաղաքացիական ծառայության համապատասխան դասային աստիճան, եթե նա չունի քաղաքացիական ծառայության համապատասխան կամ ավելի բարձր դասային աստիճան:

Քաղաքացիական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան

(բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի) շնորհվում է համապատասխան դասային աստիճանը ստանալուց ոչ շուտ, քան երեք տարի հետո, եթե քաղաքացիական ծառայողը դասային աստիճանը ստանալուց հետո երեք տարի անընդմեջ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն, ներառյալ՝ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու ժամանակահատվածը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու և այդ պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության համապատասխան դասային աստիճան ունենալու

դեպքում քաղաքացիական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան (բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի) շնորհվում է համապատասխան պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան երեք տարի հետո, եթե քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատվելու և քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնի նշանակվելու միջև ընկած ժամանակահատվածը գերազանցել է մեկ ամիսը:

Քաղաքացիական ծառայության պաշտոն, բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնի, առաջին անգամ զբաղեցնող անձին քաղաքացիական ծառայության համապատասխան դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ», «գ²», «դ», «թ», «ժ», «ժա», «ժբ», «ժէ» և «ի» ենթակետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվելու հետ միաժամանակ քաղաքացիական ծառայողը զրկվում է քաղաքացիական ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:

7. *(մասն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42)*

(8-րդ հոդվածը լրաց 09.02.2005 ՀՕ-175, խմբ. փոփ., լրաց 21.12.2005 ՀՕ-255, փոփ., խմբ. լրաց 30.05.2007 ՀՕ-42, փոփ. 17.02.2010 ՀՕ-10-Ն, խմբ. 26.02.2014 ՀՕ-5-Ն)

Հոդված 9. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը և համապատասխան մարմինների հաստիքացուցակը հաստատելը (փոփոխելը)
(վերնագիրը խմբ. 21.12.2005 ՀՕ-255)

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պաշտոնատար անձանց, իսկ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանումում՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի առաջարկությամբ:

Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված առաջարկությունը քաղաքացիական ծառայության խորհուրդ է ներկայացվում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու (փոփոխելու) իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում:

2. Քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

3. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում (փոփոխում) են սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պաշտոնատար անձինք, իսկ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանումում՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարչության գործերի կառավարչության պետը քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ՝ այդ պաշտոնատար անձանց առաջարկությամբ:

4. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատման (փոփոխման) և այդ անվանացանկում առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերը քաղաքացիական ծառայության խորհուրդը համաձայնեցման են ներկայացվում միաժամանակ:

5. Համապատասխան մարմինների հաստիքացուցակը և (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը ենթակա են հաստատման (փոփոխման) քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անվանացանկը հաստատելուց (փոփոխելուց) հետո՝ 15-օրյա ժամկետում:

Համապատասխան մարմինների հաստիքացուցակը հաստատում է մարմնի ղեկավարը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

(9-րդ հոդվածը խմբ. 21.12.2005 ՀՕ-255, լրաց. 17.02.2010 ՀՕ-10-Ն, լրաց. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 10. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաստատվում (փոփոխվում) են քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

ա) քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Արցախի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

բ) քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Արցախի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում (վերջին պահանջը կիրառվում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար դիմած անձանց ստաժի հաշվարկման դեպքում):

գ) քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Արցախի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների,

խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

դ) քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոններ՝ առանց աշխատանքային ստաժի:

2. Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը կարող են ընդգրկել աշխատանքային ստաժի և փորձի՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված չափանիշներին փոխարինող հետևյալ չափանիշները.

ա) քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն կրթություն և պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

բ) քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կրթություն և պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում (վերջին պահանջը կիրառվում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար դիմած անձանց ստաժի հաշվարկման դեպքում).

գ) քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն և պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքում:

(10-րդ հոդվածը փոփ., խմբ. 09.02.2005 ՀՕ-175, խմբ. 21.12.2005 ՀՕ-255, փոփ. 30.05.2007 ՀՕ-42, փոփ. 29.12.2008 ՀՕ-90-Ն, փոփ. 26.02.2014 ՀՕ-5-Ն, փոփ., լրաց. 26.11.2015 ՀՕ-55-Ն, փոփ. 30.11.2017 ՀՕ-36-Ն)

Գ Լ ՈՒ Խ 3

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

Հոդված 11. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող անձինք

Սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Արցախի Հանրապետության քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Հոդված 12. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձը

Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, ով՝

ա) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) դատական կարգով գրկվել է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

գ) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը.

դ) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

ե) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

Հոդված 12¹. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցվում է արտամրցութային կարգով կամ մրցույթով: *(12¹-րդ հոդվածը լրաց. 20.12.2006 ՀՕ-326)*

Հոդված 12². Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն արտամրցութային կարգով զբաղեցնելու դեպքերը

1. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանման մեջ չներառված քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների, ինչպես նաև նոր ստեղծված քաղաքացիական ծառայության պաշտոնների) առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում, մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում նշանակել համապատասխան մարմնի այն քաղաքացիական ծառայողին, ով միաժամանակ՝

ա) բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները.

բ) համարվում է քաղաքացիական ծառայության միևնույն խմբի պաշտոն գրադեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճան կամ գրադեցնելու է քաղաքացիական ծառայության իր գրադեցրած խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ կամ 2-րդ ենթախմբերի, իսկ բարձրագույն պաշտոնների դեպքում՝ 2-րդ ենթախմբի պաշտոն.

գ) համարվում է կոնկրետ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայող.

դ) այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:

2. Մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ և քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ այդ պաշտոնը կարող է արտամրցությային կարգով գրադեցնել միայն քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով գրադեցնող անձը:

(12²-րդ հոդվածը լրաց 20.12.2006 ՀՕ-326)

Հոդված 13. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու մասին քաղաքացիական ծառայության խորհրդին տեղեկացնելը

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու և սույն օրենքի 12²-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում նշանակում չկատարվելու դեպքերում աշխատակազմի ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է քաղաքացիական ծառայության խորհրդին:

(13-րդ հոդվածը փոփ 21.12.2005 ՀՕ-255, փոփ 20.12.2006 ՀՕ-326)

Հոդված 14. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն գրադեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Համապատասխան մարմինների նոր (բացառությամբ սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, ինչպես նաև քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոնների) ստեղծված քաղաքացիական ծառայության պաշտոնները, ինչպես նաև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններում սույն օրենքի 12²-րդ հոդվածով և 29-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում նշանակումներ չկատարվելու դեպքերում այդ պաշտոնները գրադեցվում են մրցույթով:

2. Քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոններ գրադեցնելու համար քաղաքացիական ծառայության խորհուրդը, իսկ քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոնների համար համապատասխան մարմինը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում են մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ հանրապետության առավելագույն տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

3. Քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոններ գրադեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը, իսկ քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոնների համար՝ համապատասխան մարմնի աշխատակազմը:

4. Մրցույթային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե քաղաքացին չի բավարարում սույն օրենքի 11-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, կամ առկա է սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

5. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

6. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

7. Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմվում են քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով՝ համակարգչում զետեղված հարցաշարից և դրանցից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.

ա) Արցախի Հանրապետության Մահմանադրության.

բ) քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրության.

գ) համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող Արցախի Հանրապետության օրենսդրության.

դ) քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնում աշխատելու ունակության ստուգման մասնագիտական հարցեր:

Համակարգչում զետեղված հարցաշարը, ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի:

Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:

Թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար կողերի կիրառմամբ՝ զադտնիությունն ապահովելու

նպատակով:

8. Մրցույթի երկրորդ՝ հարցագրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:

Մասնակիցների հետ հարցագրույցն անցկացվում է քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:

Մրցութային հանձնաժողովը հարցագրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է փակ գաղտնի քվեարկություն: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

Մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր փակ գաղտնի քվեարկության արդյունքում հավաքել են մրցութային հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:

9. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:

9¹. Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո այդ արդյունքները կարող են մասնակցի (իր արդյունքների մասով) կամ մրցութային հանձնաժողովի անդամի կողմից գրավոր բողոքարկվել:

Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված գրավոր բողոքը քննության է առնում քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ ուսումնասիրելով մասնակցի կողմից տրված պատասխանները, դրանց վերաբերյալ մրցութային հանձնաժողովի գնահատականները (դրանց ճիշտ կամ մասնակիորեն ճիշտ կամ սխալ լինելը), դրանք համադրելով քվեարկության արդյունքների հետ և որոշելով կոնկրետ մասնակցի՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու հարցը:

Քաղաքացիական ծառայության խորհուրդը սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված որոշումը հրապարակում է դա ընդունելուց հետո՝ նույն օրը:

Սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված գրավոր բողոք ներկայացնելու, դա քննության առնելու և որոշում կայացնելու կարգն ու ժամկետները սահմանում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

10. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, սույն հոդվածի 9¹-րդ կետով նախատեսված գրավոր բողոքի բացակայության դեպքում, համապատասխան մրցութային հանձնաժողովից ստացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմն ուղարկում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի: Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված կարգով և ժամկետում Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի պաշտոնում մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունն ուղարկվում է համապատասխանաբար պետական նախարարին, նախարարին, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարին և շրջվարչակազմի ղեկավարին (Ստեփանակերտի քաղաքապետին): Պետական նախարարը, համապատասխան նախարարը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարը և շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկի վերաբերյալ՝ հիմնավորմամբ, երեք աշխատանքային օրվա ընթացքում առաջարկություն է ներկայացնում աշխատակազմի ղեկավարի պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող մարմին, որն առաջարկությունն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ընդունում է պաշտոնում նշանակելու մասին որոշում:

10¹. Սույն հոդվածի 9¹-րդ կետով նախատեսված գրավոր բողոքի առկայության դեպքում, սույն հոդվածի 10-րդ կետով նախատեսված կարգով, եզրակացության հետ միաժամանակ ուղարկվում է նաև քաղաքացիական ծառայության խորհրդի սույն հոդվածի 9¹-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված որոշումը՝ դա ստանալուց անմիջապես հետո:

11. Եթե մրցույթի արդյունքում մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել կամ հարցագրույցի մասնակիցներից ոչ մեկը քվեարկության արդյունքում չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել, կամ քաղաքացիական ծառայության խորհուրդը սույն հոդվածի 9¹-րդ կետով նախատեսված դեպքում կայացրել է մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին որոշում, ապա անցկացվում է նոր մրցույթ:

Մրցութային հանձնաժողովի կազմը հաստատող անձի (մարմնի) որոշմամբ մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

ա) մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել:

բ) մրցութային հանձնաժողովն իրավագոր չէ (նիստին չի մասնակցում հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին):

Սույն պարբերության «ա» կետով նախատեսված դեպքում անցկացվում է նոր մրցույթ, իսկ «բ» կետով նախատեսված դեպքում՝ կրկնակի մրցույթ:

Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ընդհանուր հիմունքներով:

Եթե մրցույթին մասնակցելու համար ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցութային հանձնաժողովի որոշմամբ մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է նոր մրցույթ:

Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով և անցկացվում է նոր մրցույթ:

Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով:

Եթե նոր կամ կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), ինչպես նաև նոր կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվում է նոր մրցույթ:

11¹. Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավակնորդների համար քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով առնվազն երեք ամիսը մեկ անցկացվում է թեստավորում: Թեստավորումն անցկացնում է քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից ստեղծվող թեստավորման հանձնաժողովը:

Թեստավորմանը մասնակցելու թույլտվություն տալիս է քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից ստեղծվող մանդատային հանձնաժողովը: Մանդատային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցել թեստավորմանը, եթե քաղաքացին չի բավարարում սույն օրենքի 11-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, կամ առկա է սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

Թեստերը կազմում է թեստավորման հանձնաժողովը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով, համակարգչում գետեղված հարցաշարից և դրանից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած բնագավառներում ստուգելու համար:

Թեստավորման առաջադրանքների առնվազն իննսուն տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները ստանում են քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր: Հավաստագրի գործողության ժամկետը մեկ տարի է: Հավաստագիր ունեցող քաղաքացին կարող է մասնակցել հաջորդ թեստավորմանը, եթե լրացել է նրա հավաստագրի գործողության ժամկետի երեք քառորդը:

Թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացիներից գանձվում է վճար, որի չափը սահմանում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

12. Սույն օրենքի հիման վրա մրցույթ անցկացնելու կարգը և քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորում անցկացնելու և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու կարգը սահմանում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

(14-րդ հոդվածը լրաց, խմբ. 09.02.2005 ՀՕ-175, փոփ, խմբ. 21.12.2005 ՀՕ-255, խմբ. 20.12.2006 ՀՕ-326, լրաց, փոփ, խմբ. 30.05.2007 ՀՕ-42, փոփ. 17.02.2010 ՀՕ-10-Ն, լրաց, փոփ. 29.03.2012 ՀՕ-12-Ն, լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, խմբ. 26.02.2014 ՀՕ-5-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 15. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակումը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվող անձն անփոփոխելի է, բացառությամբ սույն օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

2. Սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում, իսկ սույն կետի «գ», «դ», «ե», «զ», «է» և «ը» ենթակետերով նախատեսված համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության բարձրագույն, ինչպես նաև գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է՝

ա) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմում՝ Արցախի Հանրապետության Նախագահը.

բ) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանումում՝ Արցախի Հանրապետության Նախագահը.

գ) Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմում՝ պետական նախարարը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի.

դ) Արցախի Հանրապետության հանրապետական գործադիր մարմնի աշխատակազմում՝ այդ մարմնի ղեկավարը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի.

ե) Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում՝ Հաշվեքննիչ պալատի նախագահը.

զ) Արցախի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների աշխատակազմում՝ այդ

մարմնի ղեկավարը.

ե) Արցախի Հանրապետության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի աշխատակազմում՝ այդ մարմնի ղեկավարը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի.

ը) Արցախի Հանրապետության շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմում՝ շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը), բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

3. Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարին սույն օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

4. Սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում, իսկ սույն կետի «գ», «դ», «ե», «զ», «է» և «ը» ենթակետերով նախատեսված համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 2-րդ և 3-րդ ենթախմբերի, առաջատար և կրտսեր պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է՝

ա) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմում՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը.

բ) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանումում՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարչության գործերի կառավարչության պետը.

գ) Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմում՝ պետական նախարարի աշխատակազմի ղեկավարը.

դ) Արցախի Հանրապետության հանրապետական գործադիր մարմնի աշխատակազմում՝ այդ մարմնի աշխատակազմի ղեկավարը.

ե) Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում՝ Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարը.

զ) Արցախի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների աշխատակազմում՝ այդ մարմնի աշխատակազմի ղեկավարը.

է) Արցախի Հանրապետության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի աշխատակազմում՝ այդ մարմնի աշխատակազմի ղեկավարը.

ը) Արցախի Հանրապետության շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմում՝ շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարը:

4¹. Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում առանց մրցույթի նշանակվում է քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող անձը:

4². Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում առանց հավաստագրի նշանակում կարող է կատարվել սույն օրենքի 12²-րդ հոդվածով և 29-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում:

4³. Հավաստագիր ունեցող քաղաքացիների ցուցակը վարում է քաղաքացիական ծառայության խորհուրդը: Յուրաքանչյուր թեստավորումից հետո քաղաքացիական ծառայության խորհուրդը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հավաստագիր ստացած քաղաքացիների տվյալները տեղադրում է քաղաքացիական ծառայության խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքում:

5. Քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. «Դիվանագիտական ծառայության մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում գործուղված դիվանագետները կարող են զբաղեցնել քաղաքացիական ծառայության պաշտոններ՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ:

Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման, նրանց վերապատրաստման, ատեստավորման, կատարած աշխատանքների մասին կիսամյակային հաշվետվություններ ներկայացնելու, ծառայողական քննությունների, ինչպես նաև քաղաքացիական ծառայության այլ գործընթացների հետ կապված առանձնահատկությունները և քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների ցանկը սահմանում է

քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ համաձայնեցնելով ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

(15-րդ հոդվածը փոփ., լրաց 21.12.2005 ՀՕ-255, լրաց 30.05.2007 ՀՕ-42, լրաց 29.03.2012 ՀՕ-12-Ն, լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, խմբ. լրաց 26.02.2014 ՀՕ-5-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 16. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելիս քաղաքացիական ծառայողի երդումը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձն իր պաշտոնն ստանձնում է հանդիսավոր պայմաններում սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պաշտոնատար անձի և քաղաքացիական ծառայության խորհրդի ներկայացուցիչների ներկայությամբ տրված հետևյալ երդմամբ.
«Ստանձնելով Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայողի պաշտոնը՝ հանդիսավոր երդվում եմ հավատարիմ ծառայել Արցախի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Արցախի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, աջակցել իրավական կարգի պահպանմանը, արժանապատվորեն կրել քաղաքացիական ծառայողի բարձր կոչումը, անվերապահորեն կատարել ծառայողական պարտականություններս»:

2. Երդումը տրվում է անհատական կարգով՝ յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի կողմից երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Քաղաքացիական ծառայողն ստորագրում է երդման՝ իր ընթերցած տեքստը, որը կցվում է նրա անձնական գործին:

4. *(կեսն ուժը կորցրել է 21.12.2005 ՀՕ-255)*

(16-րդ հոդվածը լրաց, փոփ. 21.12.2005 ՀՕ-255, լրաց 17.02.2010 ՀՕ-10-Ն)

Հոդված 17. Քաղաքացիական ծառայության ստաժը

1. Քաղաքացիական ծառայության ստաժը ներառում է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու, համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

Քաղաքացիական ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու, ինչպես նաև օրենքի խախտմամբ համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, մինչև քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Քաղաքացիական ծառայության ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայողի ընդհանուր և մասնագիտական աշխատանքային ստաժում:

3. *(մասն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42)*

4. *(մասն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42)*

5. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետով նախատեսված հիմքով՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձի քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Արցախի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքացիական ծառայության ստաժին:

(17-րդ հոդվածը փոփ. 09.02.2005 ՀՕ-175, փոփ. 21.12.2005 ՀՕ-255, փոփ., լրաց 30.05.2007 ՀՕ-42, լրաց 26.11.2015 ՀՕ-55-Ն)

Հոդված 18. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելը

1. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարիության, սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնն զբաղեցվում է՝

ա) պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից մինչև վեց ամիս ժամկետով կամ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված կարգով սույն կետի «բ» ենթակետով նախատեսված անձի կողմից, բացառությամբ հղիության և ծննդաբերության, երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի, պարտադիր

զինվորական ծառայության գորակոչվելու, ինչպես նաև վեց ամիսը գերազանցող ժամկետով սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերի: Այդ ժամկետի ավարտից հետո կամ փոխարինողի բացակայության, կամ սույն ենթակետով նախատեսված մյուս դեպքերում մեկշաբաթյա ժամկետում:

բ) քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիական ծառայողի, իսկ կրտսեր պաշտոնների դեպքում՝ նաև հավաստագիր ունեցող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով, դրա անհնարինության դեպքում, հաշվի առնելով սույն օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների և 24-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվում գտնվող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով, իսկ դրա անհնարինության դեպքում, հաշվի առնելով սույն օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների, 24-րդ հոդվածի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:

Չի թույլատրվում սույն կետի «բ» ենթակետով նախատեսված այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր տվյալ պաշտոնն առաջացել է նրա այդ պաշտոնից սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ», «գ¹», «գ²», «դ», «ե», «թ», «ժ» և «ի» ենթակետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ազատվելու հետևանքով:

2. Սույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված անձանց հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

(18-րդ հոդվածը փոփ. 09.02.2005 ՀՕ-175, լրաց. 21.12.2005 ՀՕ-255, խմբ. փոփ. 30.05.2007 ՀՕ-42, փոփ. 17.02.2010 ՀՕ-10-Ն, լրաց. 29.03.2012 ՀՕ-12-Ն, փոփ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՂԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ

Հոդված 19. Քաղաքացիական ծառայողի ատեստավորումը

1. Յուրաքանչյուր տարի համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:

2. Քաղաքացիական ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ:

3. Քաղաքացիական ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:

4. Քաղաքացիական ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշման հիման վրա, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի արտահերթ ատեստավորումն անցկացվում է համապատասխանաբար պետական նախարարի, նախարարի, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարի և շրջվարչակազմի ղեկավարի (Ստեփանակերտի քաղաքապետի) պատճառաբանված որոշմամբ:

5. Ատեստավորումն անցկացվում է քաղաքացիական ծառայողի անմիջական մասնակցությամբ:

6. Ատեստավորման ենթակա չեն՝

ա) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող քաղաքացիական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

բ) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:

գ) պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած քաղաքացիական ծառայողները՝ վերադառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

դ) սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները:

Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ քաղաքացիական ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Սույն կետի «ա» ենթակետը չի տարածվում սույն օրենքի 12²-րդ հոդվածի 1-ին կետով և սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքերի վրա:

7. Ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողները, ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

8. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է քաղաքացիական ծառայողի ծառայողական բնութագիրը:

Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ քաղաքացիական ծառայողի մասին, նրա գործնական, մարդկային հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում քաղաքացիական ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին յուրաքանչյուր կիսամյակ անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:

Եթե ատեստավորումների միջև ընկած ժամանակաշրջանում քաղաքացիական ծառայողի անմիջական ղեկավարն ազատվել է քաղաքացիական ծառայության պաշտոնից՝ ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով (քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող ղեկավարների դեպքում՝ հեռացման կամ պաշտոնանկության հիմքով), ապա վերջինիս տված եզրակացություններն իրավական ուժ չունեն: Եթե նման ղեկավարի տված եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջև ընկած ժամանակաշրջանի երկու երրորդից ավելին, ապա քաղաքացիական ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում:

Քաղաքացիական ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել քաղաքացիական ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:

9. Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով՝

ա) փաստաթղթային.

բ) թեստավորման և հարցազրույցի:

10. Փաստաթղթային ատեստավորման ենթակա են այն քաղաքացիական ծառայողները, որոնք ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար սույն օրենքով նախատեսված ավելի բարձր քաղաքացիական ծառայության դասային աստիճան կամ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնն զբաղեցնելու ընթացքում ատեստավորվել են:

Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով:

Ատեստավորման հանձնաժողովը յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար քվեարկության է դնում սույն կետի չորրորդ պարբերության «ա» ենթակետի որոշումը, որը հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ չընդունվելու դեպքում՝ ընդունված է համարվում սույն կետի չորրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված որոշումը:

(**Երրորդ պարբերությունն ուժը կորցրել է 09.02.2005 ՇՕ-175**)

Փաստաթղթային ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

բ) ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:

11. Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են այն քաղաքացիական ծառայողները՝

ա) որոնք փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն.

բ) որոնց վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 10-րդ կետի 4-րդ մասի «բ» ենթակետում նշված որոշումը:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է ատեստավորման հանձնաժողովը՝ սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

12. Ատեստավորման հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) (**ենթակետն ուժը կորցրել է 21.12.2005 ՇՕ-255**)

բ) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

գ) (**կետն ուժը կորցրել է 30.05.2007 ՇՕ-42**)

դ) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

Ատեստավորման հանձնաժողովը յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար քվեարկության է դնում սույն մասի առաջին պարբերության «բ» կետով նախատեսված որոշումը, որը հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ չընդունվելու դեպքում ընդունված է համարվում սույն մասի առաջին պարբերության «դ» կետով նախատեսված որոշումը:

(**2-րդ և 3-րդ նախադասությունները հանվել են 30.05.2007 ՇՕ-42**)

Ատեստավորման հանձնաժողովի որոշումները, իսկ ատեստավորման արդյունքների բողոքարկման դեպքում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումները պարտադիր են քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) համար:

13. Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի ծանոթանալ ատեստավորման արդյունքներին և բողոքարկել դրանք՝ սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

14. Ատեստավորման արդյունքները, սույն օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ և 10¹-րդ կետերով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (մարմնին), որը քաղաքացիական ծառայողի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու արդյունքի դեպքում ընդունում է նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում:

15. Քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) սույն հոդվածի 14-րդ կետով նախատեսված որոշումն ընդունում է ոչ ուշ, քան ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) քաղաքացիական ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու ժամանակ սույն հոդվածի 14-րդ կետով նախատեսված որոշումն ընդունում է նրա՝ աշխատանքի ներկայանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

16. Սույն օրենքի հիման վրա քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

(19-րդ հոդվածը փոփ. 09.02.2005 ՀՕ-175, փոփ., լրաց, խմբ. 21.12.2005 ՀՕ-255, լրաց 20.12.2006 ՀՕ-326, փոփ., խմբ. 30.05.2007 ՀՕ-42, խմբ. 17.02.2010 ՀՕ-10-Ն, լրաց 29.03.2012 ՀՕ-12-Ն, լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, խմբ. 26.02.2014 ՀՕ-5-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 20. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղումը
(վերնագիրը խմբ. 30.05.2007 ՀՕ-42)

1. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը կազմակերպում և համակարգում է քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ համագործակցելով համապատասխան մարմինների հետ:

2. Յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման:

Վերապատրաստումն անցկացվում է նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ աշխատակազմի ղեկավարի, իսկ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանումում՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարչության գործերի կառավարչության պետի նախաձեռնությամբ:

3. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումն անցկացվում է աշխատակազմի ղեկավարի, իսկ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանումում՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարչության գործերի կառավարչության պետի հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ծառայողներին վերապատրաստողների թեկնածությունը հաստատում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

4¹. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն անցկացվում է քաղաքացիական ծառայության խորհրդի հաստատած ծրագրերով:

4². Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

5. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով քաղաքացիական ծառայողի գործուղումն իրականացնում է՝

ա) մինչև մեկ տարի ժամկետով գործուղման դեպքում՝ նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի.

բ) մեկ տարուց ավելի ժամկետով գործուղման դեպքում՝ նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի, քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ:

Սույն կետով նախատեսված դեպքերում Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի և շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի գործուղումը, նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) և քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ, համապատասխանաբար իրականացնում են պետական նախարարը, նախարարը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարը և շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը):

6. Սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում պահպանվում են քաղաքացիական ծառայողի պաշտոնը

և ստաժը, իսկ նրա վարձատրությունը կարող է պահպանվել նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ:

7. Սույն օրենքի հիման վրա քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

(20-րդ հոդվածը խմբ. լրաց 30.05.2007 ՀՕ-42, խմբ. լրաց 29.12.2008 ՀՕ-90-Ն, լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, լրաց խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 21. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը

1. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվի տեսակներն են՝
 - ա) կադրերի կարճաժամկետ ռեզերվը.
 - բ) կադրերի երկարաժամկետ ռեզերվը:
2. Քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի՝
 - ա) «գ» և «ժթ» ենթակետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձինք.
 - բ) «ժզ» ենթակետում նշված հիմքով պաշտոնից ազատված աշխատակազմի ղեկավարները.

գ) (կեսն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42)

 - դ) «իա» ենթակետով նախատեսված հիմքով քաղաքացիական ծառայության պաշտոնում չնշանակված անձինք:
3. Քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցվում են՝
 - ա) սույն հոդվածի 4-րդ կետում նշված՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու ժամկետը լրացած անձինք.
 - բ) *(կեսն ուժը կորցրել է 29.03.2012 ՀՕ-12-Ն)*
 - գ) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:
 - դ) սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետով նախատեսված հիմքով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձինք:
4. Քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, իսկ կադրերի երկարաժամկետ ռեզերվում՝ մեկ տարի, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:
5. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանում է քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ սույն օրենքի համաձայն:
(21-րդ հոդվածը փոփ. 09.02.2005 ՀՕ-175, փոփ. լրաց 21.12.2005 ՀՕ-255, փոփ. լրաց 30.05.2007 ՀՕ-42, փոփ. 29.03.2012 ՀՕ-12-Ն)

Գ Լ ՈՒ Խ 5

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հոդված 22. Քաղաքացիական ծառայողի հիմնական իրավունքները

- Քաղաքացիական ծառայողի հիմնական իրավունքներն են՝
- ա) զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
 - բ) իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.
 - գ) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
 - դ) սահմանված կարգով որոշումներ ընդունելը.
 - ե) սահմանված կարգով և դեպքերում ծառայողական քննություն անցկացնել պահանջելը.
 - զ) աշխատանքի, վարձատրության, առողջության պաշտպանությունը, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը.
 - է) սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը.
 - ը) իրավական պաշտպանությունը, այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից.
 - թ) քաղաքացիական ծառայության դասային աստիճանի՝ սահմանված կարգով բարձրացումը.
 - ժ) պետական բյուջեի, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելը.

ժա) մրցույթի և ատեստավորման արդյունքները բողոքարկելը, այդ թվում՝ դատական կարգով.
ժբ) քաղաքացիական ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի քննությանը մասնակցելը և առաջարկություններ ներկայացնելը:
Քաղաքացիական ծառայողն ունի նաև սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:
(22-րդ հոդվածը լրաց 21.12.2005 ՀՕ-255)

Հոդված 23. Քաղաքացիական ծառայողի հիմնական պարտականությունները

Քաղաքացիական ծառայողի հիմնական պարտականություններն են՝
ա) Արցախի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.
բ) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.
գ) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը և հաշվետվություններ ներկայացնելը.
դ) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները կատարելը.
ե) օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները պահպանելը.
զ) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը.
է) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ զաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
ը) քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները պահպանելը.
թ) օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը ներկայացնելը:
ժ) սահմանված կարգով և ժամկետներում մասնակցել ատեստավորմանը և վերապատրաստմանը:
Քաղաքացիական ծառայողն ունի նաև սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
(23-րդ հոդվածը լրաց 21.12.2005 ՀՕ-255, փոփ 30.05.2007 ՀՕ-42, լրաց 17.02.2010 ՀՕ-10-Ն)

Հոդված 24. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Քաղաքացիական ծառայողն իրավունք չունի՝
ա) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.
բ) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.
գ) ինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.
դ) թույլ տալ քաղաքացիական ծառայողների քաղաքական զուգվածության սկզբունքի խախտումներ՝ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, կրոնական միավորումների շահերի համար.
ե) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ էլույթների համար.
զ) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.
է) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.
ը) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել սույն հոդվածի 3-րդ կետում նշված անձանց հետ, բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
2. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քաղաքացիական ծառայողը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտ:
3. Քաղաքացիական ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ ինամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության

հետ:

4. Քաղաքացիական ծառայողն իրավունք չունի քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:

(24-րդ հոդվածը խմբ. 25.04.2007 ՀՕ-37)

Հոդված 25. Քաղաքացիական ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները

1. Քաղաքացիական ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, որոնք՝ ա) հակասում են Արցախի Հանրապետության Մահմանադրությանը և օրենքներին.

բ) հանձնարարականներ տվողի կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս են:

2. Մույն հոդվածի 1-ին կետի խախտմամբ հանձնարարականներ տալու դեպքերում քաղաքացիական ծառայողը պարտավոր է ստացած հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հանձնարարականը տվողին և նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե վերադասը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը կամ հանձնարարական տվողը) գրավոր հաստատում է տրված հանձնարարականը, ապա քաղաքացիական ծառայողը պարտավոր է դա կատարել, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության, և այդ մասին գրավոր տեղեկացնել քաղաքացիական ծառայության խորհրդին: Քաղաքացիական ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած անձը:

(25-րդ հոդվածը փոփ. 30.05.2007 ՀՕ-42, լրաց 17.02.2010 ՀՕ-10-Ն)

Հոդված 26. Քաղաքացիական ծառայողի սոցիալական երաշխիքները

1. Պետությունը քաղաքացիական ծառայողի համար երաշխավորում է՝

ա) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ.

բ) վարձատրություն, իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ.

գ) ամենամյա վճարովի արձակուրդ.

դ) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը և դրա համար նախատեսված վարձատրությունը.

ե) օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն.

զ) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ գոհվելու դեպքում՝ նրա ընտանիքի անդամներին, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովում.

է) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, քաղաքացիական ծառայողի դիմումի հիման վրա, ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված, նրա և նրա ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովում՝ բռնությունից, ահաբեկումից, այլ ռոնտնություններից.

ը) ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում:

2. Քաղաքացիական ծառայողին, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, հատկացվում է տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

Հոդված 27. Քաղաքացիական ծառայողի վարձատրությունը

1. Յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող, առանց որևէ խտրականության, ունի համարժեք աշխատանքի համար համարժեք վարձատրության իրավունք:

2. Քաղաքացիական ծառայողը, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողը, ստանում է վարձատրություն՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

(27-րդ հոդվածը փոփ. 26.12.2013 ՀՕ-100-Ն)

Հոդված 28. Քաղաքացիական ծառայողի սոցիալական ապահովությունը

Քաղաքացիական ծառայողի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունը, իրականացվում է

Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 29. Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) ժամանակ

1. Համապատասխան մարմնի վերակազմակերպումը և կառուցվածքային փոփոխությունը (անվանափոխությունը) քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և կառուցվածքային փոփոխությամբ (անվանափոխությամբ) պայմանավորված հաստիքների կրճատմամբ: Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողին:

2. Համապատասխան մարմնի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) հետևանքով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոններն զբաղեցվում են անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո սույն օրենքի 12²-րդ հոդվածով սահմանված կարգով՝ 15-օրյա ժամկետում:

Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով և ժամկետում նշանակումներ չկատարելու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են սույն օրենքով նախատեսված մրցույթով:

(29-րդ հոդվածը լրաց 21.12.2005 ՀՕ-255, լրաց, փոփ. 20.12.2006 ՀՕ-326)

Հոդված 30. Քաղաքացիական ծառայողի անձնական գործը և քաղաքացիական ծառայողների գրանցամատյանը

1. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում, որը վարում է համապատասխան մարմինը:

2. Քաղաքացիական ծառայողների մասին տեղեկություններն ընդգրկվում են քաղաքացիական ծառայողների գրանցամատյանում, որը վարում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

3. Քաղաքացիական ծառայողների անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը հաստատում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

Գ Լ ՈՒ Խ 6

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱՆՈՒՄԵԼԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

Հոդված 31. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները

- ա) շնորհակալության հայտարարում.
- բ) միանվագ դրամական պարգևատրում.
- գ) հուշանվերով պարգևատրում.
- դ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
- ե) օրենքով սահմանված կարգով աշխատավարձի բարձրացում.
- զ) կարգապահական տույժի հանում:

Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաև օրենքով սահմանված խրախուսման այլ տեսակներ:

2. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված խրախուսանքները կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի նկատմամբ՝ Արցախի Հանրապետության կառավարությունը՝ համապատասխանաբար՝ պետական նախարարի, նախարարի, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարի և շրջվարչակազմի ղեկավարի (Ստեփանակերտի քաղաքապետի) առաջարկությամբ:

(31-րդ հոդվածը լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հողված 32. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝

- ա) նախազգուշացում.
- բ) նկատողություն.
- գ) խիստ նկատողություն.
- դ) օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում.
- ե) զբաղեցրած պաշտոնից ազատում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ:
- զ) քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճանի, բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, իջեցում՝ մեկ աստիճանով:

2. Մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված քաղաքացիական ծառայողից:

Կարգապահական տույժ նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը:

Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից:

Կարգապահական տույժի մասին քաղաքացիական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

Եթե քաղաքացիական ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե քաղաքացիական ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ ծառայող:

3. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգապահական տույժերը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ Արցախի Հանրապետության պետական նախարարի, նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի նկատմամբ Արցախի Հանրապետության կառավարությունը՝ համապատասխանաբար՝ պետական նախարարի, նախարարի, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարի, շրջվարչակազմի ղեկավարի (Ստեփանակերտի քաղաքապետի) առաջարկությամբ:

4. Քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով և ղեկավարում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

5. Քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը մինչև մեկ ամիս ժամկետով կարող է կասեցվել՝ քաղաքացիական ծառայողի վարձատրության պահպանմամբ:

6. Ծառայողական քննության արդյունքում քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից ընդունված որոշումներն ունեն պարտադիր բնույթ:

(32-րդ հոդվածը փոփ., լրաց 21.12.2005 ՀՕ-255, լրաց, խմբ 30.05.2007 ՀՕ-42, լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հողված 33. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը

1. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

- ա) անձնական դիմումը.
- բ) օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը.
- գ) սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը.

գ¹) սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «զ» կամ «դ» և «զ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելը.

զ²) սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելը.

դ) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը.

դ¹) *(կեսն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42)*

ե) սույն օրենքով նախատեսված ատեստավորման արդյունքները.

զ) հաստիքների կրճատումը.

է) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը.

ը) քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.

թ) քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ կամ միջնորդությամբ.

ժ) սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-3-րդ կետերով նախատեսված սահմանափակումները չպահպանելը.

ժա) Արցախի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.

ժբ) օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժգ) քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը, իսկ աշխատակազմի ղեկավարի պաշտոնն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալը.

ժդ) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ.

ժե)(*կեսն ուժը կորցրել է 30.05.2007 ՀՕ-42*)

ժզ) դատական կարգով անգործունակ, կամ սահմանափակ գործունակ, կամ անհայտ բացակայող ճանաչվելը.

ժէ) դատական կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

ժը) սույն օրենքի 12-րդ հոդվածի «զ» կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը.

ժթ) համապատասխան մարմնի լուծարումը.

ի) սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետով նախատեսված կարգապահական տույժ կիրառելու համար տրված քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությունը.

իա) սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում նշանակում չկատարելը.

իբ) սույն օրենքի 12²-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արտամրցութային

կարգով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնին նշանակելը:

2. Քաղաքացիական ծառայողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ:

3. Քաղաքացիական ծառայողը պաշտոնից ազատման ենթակա չէ սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի հիմքով, եթե առկա է սույն հոդվածի 1-ին կետի «բ-իա» ենթակետերով նախատեսված պաշտոնից ազատման հիմքերից որևէ մեկը:

4. Սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի հիմքով քաղաքացիական ծառայողը ազատվում է զբաղեցրած պաշտոնից անձնական դիմում ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե այդ դիմումում այլ ժամկետ նախատեսված չէ:

5. Սույն հոդվածի 1-ին կետի «զ», «ժթ» և «իա» ենթակետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատելու դեպքում քաղաքացիական ծառայողներին այդ մասին նախազգուշացնելը պարտադիր չէ:

(*33-րդ հոդվածը փոփ. 09.02.2005 ՀՕ-175, փոփ., լրաց. խմբ. 21.12.2005 ՀՕ-255, լրաց. 20.12.2006 ՀՕ-326, լրաց. խմբ., փոփ. 30.05.2007 ՀՕ-42, խմբ., լրաց. 17.02.2010 ՀՕ-10-Ն*)

Հոդված 34. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

2. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ և քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ՝ քաղաքացիական ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը:

Քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու համաձայնությունն ստանալու նպատակով՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը միջնորդություն է ներկայացնում քաղաքացիական ծառայության խորհուրդ՝ քաղաքացիական ծառայողի՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված առավելագույն տարիքը լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ:

3. Քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը նշանակվում է չորս տարի ժամկետով:

Այդ ժամկետը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) կարող է երկարաձգել ամեն անգամ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան նրա 65 տարին լրանալը՝ հաշվի առնելով աշխատակազմի ղեկավարի ծառայողական գործունեության արդյունքները, աշխատանքային ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև անձնական դրական հատկանիշները, իսկ եթե պաշտոնավարման վերջնաժամկետը հնարավորություն չի տալիս պաշտոնի նշանակել չորս տարով, ապա նշանակվում է մնացորդային ժամկետով, մինչև առավելագույն տարիքը:

(*34-րդ հոդվածը փոփ. 17.02.2010 ՀՕ-10-Ն*)

Հոդված 35. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու որոշումը դատական կարգով բողոքարկելը

1. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու, որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով:
2. Քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու որոշումն անվավեր ճանաչվելու դեպքում քաղաքացիական ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և հարկադիր պարապուրդի դիմաց ստանում է հատուցում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

Գ Լ ՈՒ Խ 7

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՐԿԻՆՆԵՐԸ

Հոդված 36. Քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմինները

- Քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմիններն են՝
- ա) քաղաքացիական ծառայության խորհուրդը.
 - բ) աշխատակազմերի ղեկավարները:

Հոդված 37. Քաղաքացիական ծառայության խորհուրդը

1. Մույն օրենքի հիման վրա քաղաքացիական ծառայության միասնական պետական քաղաքականությունն իրականացնում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:
 2. Քաղաքացիական ծառայության խորհուրդը
 - ա) իրականացնում է համապատասխան մարմինների կադրային գործի վարման մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը.
 - բ) քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության պահանջներին հակասող ակտերը վերացնելու համար դիմում է դատարան.
 - գ) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմինների վերակազմակերպման և լուծարման ժամանակ քաղաքացիական ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ.
 - դ) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քննում է քաղաքացիական ծառայության վերաբերյալ առաջարկությունները, դիմումները և բողոքները.
 - ե) սահմանված կարգով և դեպքերում վարում է ծառայողական քննություն.
 - զ) համաձայնություն է տալիս քաղաքացիական ծառայողի նկատմամբ սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու, սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու, սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «զ» կամ «դ» և «զ» կետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու, ինչպես նաև սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքերում.
 - է) համապատասխան և այլ մարմիններից ստանում է քաղաքացիական ծառայության հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
 - ը) հաստատում է քաղաքացիական ծառայության խորհրդի ֆինանսական միջոցների օգտագործման կարգը.
 - թ) Արցախի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում քաղաքացիական ծառայությանն առնչվող համապատասխան իրավական ակտերի նախագծերը.
 - ժ) ընդունում է սույն օրենքով նախատեսված, ինչպես նաև սույն օրենքի կատարումն ապահովող նորմատիվ իրավական ակտեր.
 - Ճա) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանցից բխող իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
 3. Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է Արցախի Հանրապետության կառավարության նիստերին:
 4. Քաղաքացիական ծառայության խորհրդի կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը:
 5. Քաղաքացիական ծառայության խորհուրդը ֆինանսավորվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:
- Քաղաքացիական ծառայության խորհրդի և նրա աշխատակազմի աշխատողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական ծառայության խորհուրդը «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ու ժամկետում, յուրաքանչյուր տարի կազմում ու Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջիկա տարվա իր բյուջետային ֆինանսավորման հայտը (Քաղաքացիական ծառայության խորհրդի ծախսերի նախահաշվի նախագիծը):

Քաղաքացիական ծառայության խորհրդի բյուջետային ֆինանսավորման հայտի ցուցանիշների համաձայնեցումը և պետական բյուջեի նախագծում դրանց ներառումն իրականացվում է «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացված քաղաքացիական ծառայության խորհրդի բյուջետային ֆինանսավորման հայտի օրինակն առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Արցախի Հանրապետության Ազգային ժողով:

Պետական բյուջեի ծախսային մասում քաղաքացիական ծառայության խորհրդի ծախսերը ներկայացվում են առանձին տողով:

6. Քաղաքացիական ծառայության խորհրդի կանոնադրությունը, նրա աշխատակազմի կազմակերպական կառուցվածքը, կանոնադրությունը, աշխատողների առավելագույն թիվը և հաստիքացուցակը հաստատում է քաղաքացիական ծառայության խորհուրդը:

7. Քաղաքացիական ծառայության խորհրդի գործողությունները և որոշումները Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են բողոքարկման դատական կարգով:

8. Քաղաքացիական ծառայության խորհուրդն իր գործունեության մասին ամենամյա հաղորդումներ է ներկայացնում Արցախի Հանրապետության Ազգային ժողով:

(37-րդ հոդվածը խմբ. 30.05.2007 ՀՕ-42, խմբ. 17.02.2010 ՀՕ-10-Ն, խմբ. 26.12.2013 ՀՕ-100-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 38. Քաղաքացիական ծառայության խորհրդի կազմը

1. Քաղաքացիական ծառայության խորհուրդը կազմված է հինգ անդամից՝ նախագահ, նախագահի տեղակալ և երեք անդամ:

2. Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահին նշանակում է Արցախի Հանրապետության Նախագահը, իսկ մյուս անդամներին՝ Արցախի Հանրապետության Նախագահը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի ներկայացմամբ:

3. Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամները, բացառությամբ քաղաքացիական ծառայության խորհրդի առաջին կազմի, նշանակվում են վեց տարի ժամկետով:

4. Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներ կարող են նշանակվել Արցախի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն, պետական կառավարման ոլորտում աշխատանքային փորձ և տիրապետում են հայերենին:

5. Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամների պաշտոնները համարվում են քաղաքացիական պաշտոններ:

6. Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամների պաշտոնավարման ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքացիական ծառայության ստաժին:

7. Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներն իրենց պաշտոնավարման ընթացքում չեն կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

8. Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամը պաշտոնից ազատվում է՝

ա) անձնական դիմումի հիման վրա.

բ) պաշտոնավարման ժամկետը լրանալու դեպքում.

գ) երեք ամիս անընդմեջ անաշխատունակության պատճառով իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը.

դ) Արցախի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

ե) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

զ) դատարանի կողմից անգործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

է) այլ պաշտոն զբաղեցնելու դեպքում.

ը) օրենքի խախտման դեպքում:

Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ:

9. Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամին պաշտոնից վաղաժամկետ ազատելու դեպքում տվյալ պաշտոնում նշանակում կատարվում է այդ անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով: Եթե պաշտոնավարման չլրացած ժամկետը պակաս է մեկ տարուց, ապա քաղաքացիական ծառայության խորհրդի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է վեց տարի՝ գումարած պաշտոնավարման չլրացած ժամկետը:

Հոդված 39. Աշխատակազմի ղեկավարը

1. Աշխատակազմի ղեկավարը, բացառությամբ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, քաղաքացիական ծառայող է:

2. Աշխատակազմի ղեկավարը, քաղաքացիական ծառայության կազմակերպման մասով, ղեկավարվում է քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ:

3. Աշխատակազմի ղեկավարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, համապատասխան մարմնի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

(39-րդ հոդվածը փոփ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Հոդված 40. Քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները

1. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը և քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնում են

համապատասխանաբար քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները:

2. Քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթն ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնում են քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից ստեղծվող մրցութային և ատեստավորման հանձնաժողովները:

3. Քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնում են համապատասխան մարմինների կողմից ստեղծվող մրցութային և ատեստավորման հանձնաժողովները:

4. Քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերն ընտրվում են այդ նպատակով համակարգչում գետեղված և պատահական ընտրված թեկնածուներից յուրաքանչյուր մրցույթ կամ ատեստավորում անցկացնելուց ոչ շուտ, քան 24 ժամ առաջ՝ հետևյալ հարաբերակցությամբ՝

- մեկ երրորդը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի ներկայացուցիչներ.

-մեկ երրորդը համապատասխան մարմնի ներկայացուցիչներ, իսկ Արցախի Հանրապետության պետական նախարարի և նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և այդ աշխատակազմի ղեկավարի ատեստավորում անցկացնելու դեպքերում՝ նաև նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) ներկայացուցիչներ.

- մեկ երրորդը՝ գիտական հաստատությունների և հասարակական միավորումների ներկայացուցիչներ:

5. Քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների համար, համապատասխան մարմինները՝ քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների մրցութային և ատեստավորման հանձնաժողովների, ինչպես նաև կրտսեր պաշտոնների ատեստավորման հանձնաժողովների համար:

(40-րդ հոդվածը փոփ., խմբ. 09.02.2005 ՀՕ-175, փոփ. 21.12.2005 ՀՕ-255, խմբ. 29.03.2012 ՀՕ-12-Ն, լրաց 26.12.2013 ՀՕ-112-Ն, խմբ. 11.06.2019 ՀՕ-32-Ն)

Գ Լ ՈՒ Խ 8

ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ ԵՎ

ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 41. Վեճերի լուծումը և պատասխանատվությունը քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությունը խախտելու համար

1. Քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

2. Քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությունը խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 9

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՂՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 42. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոդված 43. Սույն օրենքին այլ իրավական ակտերը համապատասխանեցնելը

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, սույն օրենքին համապատասխանեցնել քաղաքացիական ծառայության և դրա հետ կապված հարաբերություններ կարգավորող նորմեր պարունակող իրավական ակտերը:

Հոդված 44. Քաղաքացիական ծառայության խորհրդի կազմավորումը

1. Քաղաքացիական ծառայության խորհրդի առաջին կազմի անդամների պաշտոնավարման ժամկետներն են՝
ա) մեկ անդամի համար՝ երկու տարի.
բ) մեկ անդամի համար՝ երեք տարի.
գ) մեկ անդամի համար՝ չորս տարի.
դ) մեկ անդամի համար՝ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի տեղակալ՝ հինգ տարի.
ե) մեկ անդամի համար՝ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ՝ վեց տարի:
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ, քաղաքացիական ծառայության խորհրդի առաջին կազմը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից քսանօրյա ժամկետում:
2. Քաղաքացիական ծառայության խորհուրդը քաղաքացիական ծառայության խորհրդի կանոնադրությունը հաստատում է քաղաքացիական ծառայության խորհրդի առաջին կազմը հաստատելու օրվանից մեկամսյա ժամկետում:
3. Մինչև քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոններում սույն օրենքով սահմանված կարգով նշանակումներ կատարելը քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

Հոդված 45. Աշխատակազմի ղեկավարի հաստիքային միավոր սահմանելը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններում աշխատակազմերի ղեկավարների հաստիքային միավորները սահմանվում և համապատասխան նշանակումներ կատարվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:
Աշխատակազմերի ղեկավարները, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, համարվում են ժամանակավոր պաշտոնակատարներ, և նրանց պաշտոնների համար սույն օրենքով սահմանված կարգով անցկացվում է մրցույթ՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ութերորդ ամսվա ընթացքում:
(45-րդ հոդվածը փոփ. 23.06.2004 ՀՕ-127)

Հոդված 46. Սույն օրենքից բխող իրավական ակտեր ընդունելը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը և քաղաքացիական ծառայության խորհուրդը սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Հոդված 47. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելը

Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը սահմանված կարգով ենթակա է հաստատման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթերորդ ամսվա ամսի 1-ից:
(47-րդ հոդվածը փոփ. 23.06.2004 ՀՕ-127)

Հոդված 48. Համապատասխան մարմինների հաստիքացուցակը, աշխատողների առավելագույն թիվը և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելը

1. Համապատասխան մարմինների հաստիքացուցակը, աշխատողների առավելագույն թիվը և համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատումից հետո՝ մեկամսյա ժամկետում, Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են հաստատման (փոփոխման):

2. Համապատասխան մարմիններում հաստիքների կրճատման դեպքում այդ մարմինների աշխատանքից արձակման ենթակա աշխատողների աշխատանքային իրավունքները և երաշխիքներն ապահովվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 49. Համապատասխան մարմինների հաստիքացուցակի հաստատումից հետո քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակումներ կատարելու սահմանափակումները

Համապատասխան մարմիններում սույն օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված հաստիքացուցակի հաստատումից (փոփոխումից) հետո՝ երկամսյա ժամկետում, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններում կարող են նշանակվել միայն այդ մարմինների անժամկետ աշխատանքային պայմանագրերով աշխատողները:

Հոդված 50. Համապատասխան մարմինների աշխատողներին քաղաքացիական ծառայողներ համարելը

1. Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ իններորդ ամսվա ամսի 1-ից:

2. Համապատասխան մարմինների աշխատողները, սույն հոդվածով սահմանված կարգով, քաղաքացիական ծառայողներ են համարվում՝ հաշվի առնելով սույն օրենքի 10-12-րդ հոդվածների, 24-րդ հոդվածի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի պահանջները:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով քաղաքացիական ծառայող համարված համապատասխան մարմինների աշխատողներին քաղաքացիական ծառայության առաջին համապատասխան դասային աստիճանը շնորհվում է քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելու հետ միաժամանակ:

4. Համապատասխան մարմիններում, սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ իններորդ ամսվա ամսի 1-ից հետո քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է մրցույթով:

(50-րդ հոդվածը փոփ. 23.06.2004 ՀՕ-127, խմբ. 26.11.2015 ՀՕ-55-Ն)

Հոդված 51. Համապատասխան մարմիններում ժամկետային աշխատանքային պայմանագրերի լուծումը

Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող ժամկետային աշխատանքային պայմանագրերով աշխատողների հետ կնքված պայմանագրերը համարվում են լուծված սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ իններորդ ամսվա ամսի 1-ից, եթե այդ պայմանագրերով դրանց լուծման ավելի վաղ ժամկետներ նախատեսված չեն:

Հոդված 52. Քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

Քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթը, սույն օրենքով սահմանված կարգով, անցկացվում և համապատասխան նշանակումներ կատարվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ իններորդ ամսվա ընթացքում:

Հոդված 53. Համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայողների առաջին վերապատրաստումը

(53-րդ հոդվածը խմբ. 09.02.2005 ՀՕ-175, ուժը կորցրել է 26.11.2015 ՀՕ-55-Ն)

Հոդված 54. Համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայողների առաջին ստեստավորումը

(54-րդ հոդվածը խմբ. 09.02.2005 ՀՕ-175, ուժը կորցրել է 26.11.2015 ՀՕ-55-Ն)

Հոդված 55. Նախկինում կիրառված կարգապահական սույժերը հաշվի առնելը

(55-րդ հոդվածն ուժը կորցրել է 17.02.2010 ՀՕ-10-Ն)

Հոդված 56. Քաղաքացիական ծառայող համարված անձանց նախկինում շնորհված դասային և հատուկ կոչումները պահպանելը

Քաղաքացիական ծառայող համարված անձանց նախկինում շնորհված դասային և հատուկ կոչումները (որակավորման դասերը) պահպանվում են դրանք շնորհելու համար հիմք համարվող իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Հոդված 57. Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին օրենքի ընդունման ժամկետը
(57-րդ հոդվածն ուժը կորցրել է 26.12.2013 ՀՕ-100-Ն)

Հոդված 58. Հանրապետական գործադիր առանձին մարմինների աշխատակազմերում ծառայության հետ կապված առանձնահատկությունների կարգավորումը

1. Պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, արտաքին գործերի, հարկային և փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում ծառայության հետ կապված առանձնահատկությունները ենթակա են առանձին օրենքներով կարգավորման:

2. Մույն հոդվածի 1-ին կետով նախատեսված օրենքներով կարող են սահմանվել նաև քաղաքացիական ծառայության հետ կապված առանձնահատկություններ:

(58-րդ հոդվածը փոփ. 29.12.2008 ՀՕ-90-Ն)

Հոդված 59. Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակից բխող առանձնահատկությունների կարգավորումը

(59-րդ հոդվածը լրաց. 25.04.2007 ՀՕ-37, ուժը կորցրել է 26.11.2015 ՀՕ-55-Ն)

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

27 դեկտեմբերի 2003թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-76